ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ

/2015թ. առաջին կիսամյակ/

| | I եռ. | II եռ. | 1-ին կիս. |
|---|---|---|---|
| 1. Ստացվել են նամակներ ընդամենը | 679 | 420 | 1099 |
| որից՝ | | | |
| աջակցություն | 673 | 412 | 1085 |
| առաջարկություն | 1 | 1 | 2 |
| հարցում | 2 | 2 | 4 |
| բողոք | 3 | 5 | 8 |
| այդ թվում՝ | | | |
| կրկնակի | 1 | 1 | 2 |
| կոլեկտիվ | 10 | 12 | 22 |
| 3. Ըստ հարցի բնույթի՝ | | | |
| բնակարանային | 12 | 2 | 14 |
| կոմունալ-կենցաղային | 10 | 6 | 16 |
| շինարարական | 2 | 3 | 5 |
| արդձեռ/տրանսկապ/ | 1 | 2 | 3 |
| գյուղատնտեսական | 2 | 3 | 5 |
| բնութ. պահպանութ. | 1 | 1 | 2 |
| առևտրի | 1 | - | 1 |
| կենսաթոշակի և նպաստի | 1 | 5 | 6 |
| առողջապահության | 58 | 48 | 106 |
| կրթական և մանկ.հիմն | 75 | 12 | |
| գիտութ.կուլտուրա | - | - | - |
| ֆինանսական | 411 | 235 | 646 |
| օրենսդրական | - | 1 | 1 |
| քաղ. և որդեգրման | - | 3 | 3 |
| աշխ.տեղ և հաշվառման | 33 | 19 | 52 |
| հողհատկացում և հողօգտ. | - | 1 | 1 |
| միգրացիոն ծառ. վերաբերյալ | 38 | 56 | 94 |
| ապարատային | 14 | 16 | 30 |
| այլ հարցեր | 20 | 7 | 27 |

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2015 թվականի առաջին կիսամյակում քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2015 թվականի առաջին կիսամյակում քաղաքացիներից ստացվել է 1099 դիմում, որից 1085-ը՝ աջակցության խնդրանքով, 8-ը՝ բողոք, 2-ը՝ առաջարկություն, 4-ը՝ հարցում:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 45 դիմումներից 42-ին տրվել են սպառիչ պատասխաններ: Աշխատանքի տեղավորման մասին 52 դիմումներից դրական լուծում է ստացել 9-ը, մյուսները վերցվել են հաշվառման: Միգրացիոն ծառայության վերաբերյալ 94 դիմումներից դրական լուծում է ստացել 46-ը:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 31 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 646 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 526 հոգու: Անվճար բուժսպասարկման խնդրանքով դիմած 32 քաղաքացիներից բավարարվել է 20-ի խնդրանքը, 6 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագրի տրամադրման միջնորդություն, 75 հոգու՝ առողջարանային ուղեգիր:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը: 2015 թվականի առաջին կիսամյակում կատարվել է 431 քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով: